76. ԽԵԼՔՈՎ ԿՆԻԿ

Էրիկ ու կնիկմ՝ կէզնին ու ֆուկարա կէզնին ուրանք։

Մեկ օր կնիկ առկան կմանա ու ճամբախ կէրթա։ Կէրթա կաշկա օր կազին փանջարեն նստած ա։ Կազին աչկեց կնիկ։ Կնիկ աշկով էրաց կազուն։ Կազին իճավ ցածր, էկավ կնիկ տեսավ։

Կնիկ ըսավ.—Խլիսուն սահաթ չորսին արի տուն։

Կնիկ անցավ քնաց։ Աչկեց օր մուֆթին էլ ա փանջարեն նըստած։ Մուֆթեն կնկան աչկով էրաց։ Կնիկ ալ մուֆթուն քլխով էրաց։ Մուֆթեն ցած կիչնա։

Կնիկ կասա.—Առավոտուն սահաթ չորս տաս անցած՝ արի։

Կնիկն տնցավ քնաց։ Աչկեց օր փաշեն նստած է տռան հ'առաճ։ Փաշեն կանչա կնիկ։ Կնիկ կէրթա մոտ։

Կըսե.—Ի՞նչ չափ փարա կուզես տամ քեզի, գամ քու մոտ։

Կնիկ կասա.— Առավոտուն սահաթ չորս քսան անցնի՝ արի։

Կնիկ քնաց տուն։ Առավոտուն իրկան խրկե չարսուն։

Սահաթ չորսին փրցավ, կազին էկավ՝ մշակն ուրա խետ, բոխշեմ ալ լիք մշկու ծեռ։ Տուռ տրկեց[1]։

Տուռ պացեց, առավ կազին ներս, մըշկուց բոզչեն էլ առավ։

Փրցավ, մուֆթեն էլ էկավ, տուռ տրկեց, մշակն էլ հետ։

Կնիկ կազուն ասաց.—Փրցավ, իմ իրիկ էկավ, հ'ելիր պախկըվիր ցորենի ամբարի մեջ։

Էնի մտավ ամբար։ Կնիկ տուռ պացեց, մուֆթին առավ ներս։

---

1 Թակեց, ծեծեց (Ծ. Բ.)։

Էնորն էլ բողչեն առավ մշկուց։ Կպանան բողչեն, պըրտյումմ՝ էրկու բողչից կուտեն։

Աշկեց օր տուռ տրկեցին։ Մուֆթուն ասաց.—Տուռ կը տկեն։

Մուֆթեն ըսավ.—Ո՞ր տեղ պախկըվիմ, օր զիս չտեսնին։

Ասաց.—Մուֆթի, հ՝ելի՛ր, մտիր ամբար։—Էրկու խոգի էզան ամբրի մեջ։

Հ՝ելավ տուռ պացեց, աշկեց օր փաշեն ա, մշակն էլ ա խետ, բողչե մի մշկու ծեռ։ Կնիկ բողչեն մշկու ծեռնեն առավ։ Փաշեն ու կնիկն խնդրաց էկան տուն։ Նստան մեկ տաս թախկա կադար բողչի մեջի պաներն ա կուտեն, մեկ էլ տուռ տրկեցին։

Փաշին ըսավ.—Տուռ տրկեցին։

— Տեղ մի գտիր, ես պախկըվիմ։

Կնիկ ըսաց.—Փաշա՛, հ՝ելիր, մտիր ամբար։—Էն ալ հ՝ելավ մտավ ամբար։

Կնիկ տուռ պացեց, ուր իրիկն էր։

Ըսավ.—Մա՛րթ, քընա հաց պեր ուտենք։

Իրիկն ըսավ.— Փարա չունիմ օր էրթամ հաց առնիմ։

Կնիկն իրկան ըսավ.— Էսա ամբար տար ծախի (իրիկ խաբար չունի որ մարթ կա ամբարի մեջ)։

Իրիկ գնաց համալ մի կանչեց, ըսավ.—Համա՛լ, արի՛ ամբար մի կա, տար չարսուն։

Առավ կնաց չարսուն, տարավ, թալեց մեյդան։

Ճանապարհն իքան, էդ կազին կբռռա, կըսե.— Համալ, կնա իմ տղին ասա, թըխ էսա ամբար մինչև քանի օսկի կէղնի՝ առնի։ Օր էրթաս ասես, քեզի օսկի մի կուտամ։

Կը տառնա մուֆթին կասա.—Համա՛լ, համա՛լ, ես մուֆթին եմ, կընա իմ տղին ասա, թըխ էսա ամբար մինչև քանի հազար օսկի կէղնի՝ առնի։ Եփ օր իմ տղեն առավ, ես էրկու օսկի քեզի կուտամ։

Փաշեն ամբար կզանի, կասա.—Համա՛լ, համա՛լ, կընա իմ տըղին ասա, էսա ամբար, քանի հազար օսկի կէղնի՝ թըխ առնի։ Եփ օր իմ տղեն ամբարն առավ, իրեք խատ օսկի էլ քըզի կուտամ։

Համալ տարավ ամբար ձրքեց մեյդան։ Համալ մտածեց, ասաց՝ «Ջանըմ, կազին օսկի մի կուտա, կանիր էրթամ կազու տղին ասեմ, թըխ գա ամբարն առնի»։ Կդառնա կասա՝ «Ես քնացի կազու տղին ասի, կանիր վազնիմ մուֆթու տղին էլ ասիմ, էրկու օսկի էլ մուֆթու տղեն կուտա, կէղնի իրեք օսկի»։ Հետո կըսե՝ «Կանիր վազնիմ փաշի տղին էլ ասիմ»։ Փաշի տղին կնաց ասաց. «Իրեք օսկի փաշի տղեն էլ ա կուտա»։

Հ'ելավ կաղու տղեն էկավ նստավ չարսոն՝ ամբարի մոտիկ։ Մուֆթու տղեն էլ ա էկավ չարսուն, նստավ կաղու տղից քիչ զատ։ Փաշի տղեն էլա էկավ, էդա էրկուսից զատ նստավ։

Խայ քնաց դալալ գտնի, օր թե ամբար խանա սուլթան մազաթ ծախեն։ Տեսնանք ո՞ր մեկ պիտի ամբար առնի։

Մուֆթու տղեն մեկեն ամբար խանեց խարիր օսկի։ Կաղու տղեն էլա ասաց. «Էրկու խարիր օսկի ընձի մոտ»։

Փաշի տղեն էլա ըսավ.— Ամբար վեց խարիր օսկի։

Հայ, թուրք աշքեցին՝ մեկ ամբար վեց խարիր օսկի, էսի ի՞նչ պատճառ ա։

Կաղու տղեն ամբարն էրաց ութ խարիր օսկի։ Մուֆթու տղեն ասաց՝ «Հազար օսկի, ամբարն ընձի մոտ»։ Փաշի տղեն ասաց. «Էրկու հազար՝ ընձի մոտ»։

Էնտեղ դալալ հ'առա՜ջ էրաց, հասցուց փաշի տղին։

Փաշի տղեն սյերեց աշկեց, տեսավ օր խերն, կաղին ու մուֆթեն մեջն են։

Տարցավ փաշեն ըսավ.—Ջանըմ, կործ է, պատահեր ա։

Փաշեն հ'ելավ ամբարից։ Համալ կանչեցին, տվեցին ամբար համալի շալակ, տարան մեյդան, օր ամբար մեկ էլ ծախեն։

Մուֆթու տղեն ու կաղու տղեն էնտեխ նստուկ են։ Մուֆթու տղեն ամբար տեսնելուն պես ըսավ.— Էրկու հարուր օսկի։

Կաղու տղեն էլ էրաց էրկու հարուր հիսուն օսկի։

Հ'առաջ էրեցին կաղու տղի վրեն։

Կաղու տղեն առավ կնաց, պացեց տեսավ օր խերն ու մուֆթին մեջն են։

Տարցավ խերն ըսավ.—Տղա՛, փորցանք ա պատահեր ա դլխուս վրա։

Տղեն ըսավ.—Ի՞նչ էնենք էսա ամբար։

Խերն ըսաց.— Տար ծախա՛, ի՞նչ պիտի ընես։

Համալ կանչեց, տվեց համալի շալակ, համալ առավ քնաց, թալեց մեյդան։ Դեռ մուֆթու տղեն էն տեղ նստած է։ Պերին ամբար, ամբարին հարիր ղուրուշ մենակ կուտան։

Մուֆթու տղեն հարիր ղուռուշ տվեց առավ ամբար ու քնաց։

Թող խերն ամբարից խանա, ամբարն էլ ճղճղեն վառեն։ Դառնանք վըր կնկան, իրկան։ Էնի հարստացավ։ Առավ էրկու հազար օսկին ու էկավ տուն ուրախնելեն։

Ըսավ.— Կնի՛կ, էս ի՞նչ քարամաթ էր քու քարամաթ, ամբար էս չափ օսկի պռնեց։

Կնիկ հեշ բան չըսավ։ Նոր հ'ելավ իրեք մշկու բողչեք պերեց, պացին, տվեց իրկան նըշանց։ Մեկ տեղ կերան, նոր կընիկն ը-սավ.—Ես էսպես պանմ էր էրի։

Աստծուց կիշնի իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ չաղամաթին։